ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1223³-22.12.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքի 14. 9-րդ հոդվածի 1-ին մասը «որոշումները» բառից հետո լրացնել «՝ համապատասխան գործողությունը կատարելու (անգործություն ցուցաբերելու) կամ որոշման ծանուցման կամ հրապարակման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ իրավասու մարմնի կամ գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները (դրսևորած անգործությունը) կամ կայացված որոշումները կարող են դատական կարգով բողոքարկվել սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում:

~~Առաջին ընթերցում~~

Երկրորդ ընթերցում

Կ-1223³-22.12.2025-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքի 14. 9-րդ հոդվածի 1-ին մասը «որոշումները» բառից հետո լրացնել «՝ համապատասխան գործողությունը կատարելու (անգործություն ցուցաբերելու) կամ ~~որոշումը կայացնելու~~ որոշման ծանուցման կամ հրապարակման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 2. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող ~~տասներորդ օրը~~ օրվանից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ իրավասու մարմնի կամ գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները (դրսևորած անգործությունը) կամ կայացված որոշումները կարող են դատական կարգով բողոքարկվել սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1223-22.12.2025-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1223[1]-22.12.2025-ՏՀ-011/1),««ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1223[3]-22.12.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1223-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող օրենքի 29.1-ին հոդվածի. 1. վերնագրից հանել «մրցույթի անցկացման» բառերը 2. 2-րդ մասի «բողոքի քննարկման» բառերը փոխարինել «Հանձնաժողովի որոշումների բողոքարկման» բառերով.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի» առաջարկում ենք հանել 2-րդ հոդվածի վերնագիրը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 3. Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «Հանձնաժողովի» բառը փոխարինել «Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի» բառերով:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1223[1]-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1.Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջով, այն է. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»: Մասնավորապես՝ առաջարկում ենք	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն օրենքի» բառերը փոխարինել «2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի» բառերով: 2. Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 4-րդ մասում «մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հետ կապված վեճերով» բառերից հետո լրացնել «և «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի հետ կապված վեճերով» բառերը, իսկ «իրականացման կասեցմանը» բառերից հետո լրացնել «, խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի իրականացման կամ օպերատորի գործունեության կասեցմանը» բառերը:»		
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը, այն է՝ Նորմատիվ իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ, եթե նորմատիվ իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է սահմանել ըստ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի՝ ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր, Նախագծում առաջարկում ենք լրացնել անցումային դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի հետ կապված վեճի վերաբերյալ գործով կիրառված հայցի ապահովման միջոցը, որը հանգեցրել է խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի իրականացման կամ օպերատորի գործունեության կասեցման, սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից համարվում է վերացած օրենքի ուժով:»:		
««ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1223[3]-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «որոշումը կայացնելու» բառերը փոխարինել «որոշման ծանուցման կամ հրապարակման» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի» առաջարկում ենք հանել 2-րդ հոդվածի վերնագիրը: 2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված	**Ընդունվել է:** :	**Ընդունվել է:**

			ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:		
«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1223[2]-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասը, այն է՝ Օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: 2. Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի «մրցույթի» բառը փոխարինել «ընթացակարգի» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**